Ուսանող 2

Գրեք *հիմք* բառը թղթի վրա և ցույց տվեք այն ձեր խմբին:

- Ինչո՞ւ է հիմքը շենքի կարևոր մասը:
- Ի՞նչ կարող է պատահել, եթե խնդիր կա հիմքի հետ:

Հանձնարարեք ձեր խմբի անդամներից մեկին կարդալ Ա Կորնթացիս 3.10-ը բարձրաձայն, և խնդրեք խմբի մյուս անդամներին ուշադրություն դարձնել, թե ինչ ասաց Պողոսը կորնթացիների մեջ իր միսիոներական աշխատանքների մասին:

- Ի՞նչ ասաց Պողոսը, որ նա արել է Կորնթոսում որպես միսիոներ ծառայելիս:
- Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ուներ Պողոսը, երբ նա ասաց. «ուրիշ հիմք չէ կարող դնել»:

Հանձնարարեք ձեր խմբի մի այլ անդամի կարդալ Ա Կորնթացիս 3.11-ը բարձրաձայն և խնդրեք դասարանի մյուս անդամներին փնտրել, թե Պողոսը ինչ հիմք դրեց Կորնթոսի Սրբերի համար:

- Պողոսը ի՞նչ հիմք դրեց, մինչ ուսուցանում էր Կորնթոսում:
- Ըստ 11-րդ հատվածի, ո՞վ պետք է լինի մեր կյանքի հիմքը: (Համոզվեք, որ ուսանողները բացահայտեն հետևյալ ճշմարտությունը. **«Հիսուս Քրիստոսը հիմքն է, որի վրա մենք պետք է կառուցենք:** Գուցե առաջարկեք ձեր խմբին նշել այդ ճշմարտությունը հատվածի 11-ում):
- Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցելը ինչո՞վ կարող է օգնել մեզ դիմանալ գայթակղություններին ու փորձություններին: (Տես նաև Հելաման 5.12):
- Ի՞նչպես կարող ենք մենք ապահովել մեր կյանքը, կառուցելով այն Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

Հրավիրեք ձեր խմբի մի անդամի կիսվել ինչ-որ մեկի մասին, ում կյանքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա կառուցված լինելու արտացոլումն է: Հրավիրեք այդ ուսանողին բացատրել, թե ինչպես է Քրիստոսի հիմքի վրա կառուցելը օրհնել այդ անձնավորությանը:

Հրավիրեք յուրաքանչյուր խմբի անդամի նպատակ դնել, որը կօգնի նրան կառուցել Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

© 2015 INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: